Ամեն տարի շուրջ 1.25 մլն մարդ մահանում է ՇՏԴ-ի հետևանքով:

ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱՅԻ
ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
ԵՎ ՆԵՐԿԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ատամնաբուժությունը մարդկության դատմության մեջ գոյություն է ունեցել դեռևս հազարամյակներ առաջ։ Այդ ժամանակներից մինչ այսօր այն աղդել է հսկայական էվոլյուցիա, բանգի սկզբում այս «մասնագիտությունը» սահմանափակվում էր միայն խնդրահարույց ատամը հեռացնելով և մարդուն ազատելով տհաճ ցավից։ Որոշ ժամանակ անց, փորձեր են կատարվել նաև որդղեգավորել բացակա ատամները. դրանք փոխարինվել են կենդանիների ատամներով, տարբեր տեսակի մետաղներով, ընդհուպ՝ մահացած մարդկանց ատամներով։ Իսկ արդեն քաղաքակիրթ աշխարհի մարդու համար բավական չէ միայն բացակա ատամը լրացնելը, այն դեռեք է ունենա նաև ճիշտ դիրք ատամնաշարում, նվազագույն վնաս դատմադի մյուս ատամներից և մարդուն, դեռեք է ունենա առավելագույնս բնական տեսք։

Հայաստանում ստոճատողիզհիւան բուռն զարգացում սկսեց աղորել, երբ 1961թ.-ին Երևանի ոյետական բծշկական իմատիտուտում, հիմնաղորվեց ստոճատողիզհական Զակլուլտերը՝ հանրաղետուրջան ազգայնակշուրջանը բարձրակարգ բծիշկ-ստոճատողիզ դասնագետների ծաղաղությունը աղահիղելու նղատակը:

հստորիդային տարիներին ղաղցեւոյցներին տախանջը հնարավոր էր հոգալ այնքանով միայն, որ կարելի էր տաստրաստել ծանողական ֆունկցիան մասամբ վերականգնող որոշեցւոր, սակայն դրանց արդյունավետութիւնը մեր օրերուն դժկար է գնահատել բավարար, բանգի յոյութիւն և յատրաստան եղանակները մերօրյա չափանիշներին նոյնիսկ մոտ չէին: Այդ ժամանակահատվածում ատամի ներվագրկումը (դէտրոյդացիան) ընդհանուր առմամբ անհնար էր իրականացնել անբողջութեամբ, և բժիշկը ստիպված էր լինում հեռացնել ատամը՝ ոչ լիարժեք բուժման տատնաւով:

Այդ տարիներին լայն կիրառում ունեին ճանված շաղկերեքը, որոնք լավագույն դեղքուն տատրաստվում էին ոսկուց, և բացակա ատամի ճարմնին ամրացվում էին զոդճան միջոցով, իսկ վատագույն դեղքուն տատրաստվում էին որոդդատից, զոդվում ցիկել-քրոմ ճետադով և ճարդոջ կոճարոկցիան տատվում էր բուլատով՝ ոսկեզույն երանջ ստանալու ցրատակով:

Այնուհետև առաջ եկավ ծովման եղանակը և շաղիկները սկսեցին ունենալ ավելի ճշգրիտ ձև: Զույված կոնստրուկցիան սկսեցին դասել տարբեր

Երկրորդ՝ Կոնստրուկցիայի սոփիստակ գույճն ամրափոխելու համար: Այդ Երկրորդից է՛ն ակրիլայի՛ն լաաստնասները և կերամիկան:

Արդեն որոշեցավորման զարգացման ընթացքում, երբ ղազհեհնների էթետիկ ղաահնշերն ավելաաան, մասնաշետները սկսեցին դրանք ղատրաստել աաավել հմորեն, զարգաաուն աորեցին հաև մետաղները: Դեևա խորհրդալին տարիներին կիրառվում էր ոսկին որոշա ղորոշեզավորման հյուղ, դրանից ղատրաստում էին արհեստական աաամներ, հեհք, կարծրուլթյունը աղաահվելու համար հետազալում ստեղծվեցին հաև ոսկու և ալլ թանկարծեք մետաղների համաձուլաշծքներ, որոհք մինշ ալմ մեծ կիրաաում ուեհն սաոմատղոցալում:

1980-ական թվականներից բժշկները հասկացան, որ առանձր վերականգնելու համար էթետիկ և ֆունկցիոնալ ամենամոլատակահարմար ընդլեռն առանցքաբուժական կերամիկան է, ուստի անընդհատ փորձեր էին արվում կիրառել առանցքաբուժական կերամիկան առանց մետաղական հենքի, այսինքն՝ այն ամրացնել ամփոփառել առանհիմ լուսաթափանցելիությունը արդիանվելու համար:

Ալօթեզիվ հաճակաբերի ստեղծմանը և զարգացմանը զուգահեռ լուծվեց նաև կերամիկայն անմիջադեպ ատամին հերմետիկ ամրացնելու խնդիրը, բարելավվեց լուծնափոփող ատամների էսթետիկ տեսքը և շնորհիվ այդ տեխնոլոգիաների, այլևս կարիք չկար ատամը չափից շատ հոկել՝ ռետենցիոն կետերը ստանալու համար: Այսօրսով, սկիզբ առավ մինիմալ ինվազիվ ստոմատոլոգիան, որը լոպարտոգոմի է բժշկելի աշխատել օթոսկական խոշորացման լոպյանցներուն. դրա շնորհիվ ատամը հոկվուն է ալքքան, որքան հարկավոր է:

Հետխորհրդային տարիներ

Արդե՞ն հետխորհրդային տարիներին, երբ մեր երկրում սկսեցին հայտնվել մասնավոր ատանճաբուծարաններ, ստեղծվեց մրցակցություն և դա, իհարկե, հանգեցրեց ոլորտի զարգացման և առաջնադասմանը, ներդրվեցին նոր մեթոդներ, բարելավվեց տեխնիկան, զարգացավ լոգիստիկ հետ շփման մշակույթը, աշխատանքներ տարվեցին սղասարկման որակի բարելավման վրա:

Ներկայումս ատանճաբույժի առջև դրված են ավելի մեծ խնդիրներ, քանզի կա ատանճաբուծական ցյութերի մեծ ընտրամի, գործիքների բազմազան տեսակներ և այլն:



Վերջին տասնամյակում Հայաստանում մեծ զարգացում է ստացել նաև թվային տեխնոլոգիաների կիրառումը ատանաբուժության ոլորտում, որը սկսվում է թվային ռենտգեն համակարգերից և ավարտվում ժամանակակից Երբերանային սթանդերտերով, CAD-CAM համակարգով, 3D տոփշներով և զանազան ծրագրերով, որոնք բժշկի աշխատանքը դարձնում են ատակել արագ և արդյունավետ:

Ներքերանայից սքաներների օգնությամբ կարելի է որոշել կծվածքի տարբեր տեսակի անոմալիաներ, բացարձակ ճշգրտությամբ որոշել ատամնափողույնը, փխտորոշել կարիեսը և, վերջապես, ստանալ և վերնորտադրել ղայքինտի ատամների ճշգրիտ գույնը:

CAD-CAM համակարգերը մեծ ֆորեգերային հաստոցներ են, որոնք ունեն 1-5 աշխատանքային առանցք, և որքան առանցքները շատ են, այդքան հաստոցն ավելի ճշգրիտ է և ունիվերսալ: Դրանք նախատեսված կարող են լինել ինչոյես կինոկոնցերում, այնոյես էլ մեծ ֆորեգերային կենտրոններում օգտագործման համար:

Իսկ թվային-հաճակարգչային ծրագրերը
հնարավորություն են ընձեռում կարճ

ծածանակահատվածում իրականացնել ձեռնարկի աշխատանք: Սրանց օգնությամբ կարելի է կատարել րացիենտի դեմքի անալիզ ընդհանրը 3-5 րոդետուն և կանխատեսել ստացվելիք վերջնական արդյունքը, այնուհետև թվային տարբերակով ներկայացնել րացիենտի: Առանց այս ծրագրի Մույն գործընթացը կարող էր տևել 2-3 րոմայց:

Օժանդակ ծրագրերը արդիական են նաև ինդյանստրուկտայի և օրթոդոնտիայի ոլորտներում: Վերջին տարիներին աշխարհում, այս տարի արդեն նաև Հայաստանում, կիրառություն են ստացել 3D տոմիչները: Դրանցով կարելի է տրոել վիրաբուժական ձևանմուշով (շաբլոն), կաղաներ, մոդելներ, ատաններ, ծնուներ, յորդթեգներ և այլն: Դրանց ընձնած հնարավորություններն անսահմանափակ են, ամեն բան կախված է այն կիրառող մասնագետից:

Ուրախությամբ կարող եմք փաստել, որ
Երեկայումս Հայաստանում կարելի է իրականացնել
ստոնաւորոգիական ցանկացած տեսակի և ծավալի
աշխատանք: Ժամանակակից ճոտեցումները և
մեթոդները Երրորդում և կիրառվում են Ըսւ Ծեզ ճոտ,
և զարգացումը տեղի է ունեւում համաշխարհային
ոլորմին համընթաց:



ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԺՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

զինվորական հոսպիտալը, ակնաբուժարանը, հոգեկան հիվանդների խնամատունը, Հ. Դովհաննիսյանի և Ա. Տեր-Ավետիքյանի մասնավոր հիվանդանոցները, 1918թվականին քաղաքային հիվանդանոցը տեղափոխվել է նորակառույց շենք և վերանվանվել 1-ին քաղաքային հիվանդանոցի, այնուհետև հիմնադրվել են 2-րդ և 3-րդ կլինիկական հիվանդանոցները:

Երևանում առողջադահույթյան կազակերդումն առաջին անգամ լողտական ուշադրության է արժանացել խորհրդային իշխանության օրոք. 1920 թվականին կազմավորվել է Առողջադահույթյան ժողկոմատը (1946 թվականից՝ ՀԽՍՀ ԱՆ), որի իրավասությանն են հանձնվել բժշկասանիտարական բոլոր հիմնարկները, այդ թվում՝ մասնավորները: 1922 թվականին քաղաքային 2-րդ կլինիկական հիվանդանոցում բացվել է ակնաբուժական բաժանմունք՝ 25 մահճակալով, որը 1925թվականին վերակառուցվել է Աչքի հիվանդությունների կլինիկայի: Ստեղծվել է մոր և մանկան դահլիճային ծառայություն:

1880-1881 թվականներին քաղաքային բժիշկ Լևոն Տիգրանյանի նախագահությամբ գործել է Առողջադահական մշտական հանձնաժողով: 1881 թվականից հրատարակվել է «Առողջադահական թերթը»: Առաջին համաշխարհային դատերազմի նախօրյակին Երևանում բացվել են քաղաքային և բանտի հիվանդանոցները,

Հիմնադրվել են բժշկական ուսումնական հաստատություններ՝ 1921 թվականին՝ բժշկական ուսումնարանը, 1922 թվականին՝ ԵՊՀ բժշկական ֆակուլտետը (1930թվականից՝ ԵԲՀ, 1995 թվականից՝ ԵՊԲՀ), 1923 թվականին՝ Տրոյիկական ինստիտուտը, 1933 թվականին՝ Սանիտարական տեսչությունը, 1937 թվականին՝ Ախտահանման կայանը:

Հայրենական Մեծ դատերազմի սկզբին Երևանում գործել են 20 հիվանդանոցային հիմնարկներ, աշխատել է 505 բժիշկ (1000 բնակչին՝ 2,2 բժիշկ): Առողջադահույթյան կազմակերպման աշխատանքները լայնորեն ծավալվել են հատկապես հետդատերազմյան ժամանակաշրջանում. հիմնադրվել են Վնասվածքաբանության և օրթոդոնտիայի (1946), Ռենտգենաբանության և ուռուցքաբանության (1946) ԳՀԻ-ները: 1957 թվականին Երևանում շահագործման է հանձնվել 8-րդ կլինիկական հիվանդանոցը, 1961 թվականին Սրտաբանության և սրտային վիրաբուժության ԳՀԻ-ն, որի հիմքի վրա 1975 թվականին հիմնադրվել է ԽՍՀՄ ԲԳԱ համաձիութենական զիտական կենտրոնի Երևանի մասնաճյուղը (1991 թվականից՝ Ա. Միքայելյանի անվան վիրաբուժության ինստիտուտ), Շտապ բժշկական

օգնության 2-րդ կլինիկական հիվանդանոցը: 1984 թվականին Հանրադատական կլինիկական հիվանդանոցում ստեղծվել է Հանրադատական պատորոշման կենտրոնը:

ՀՀ վերանկախացումից հետո, առողջադահույթյան համակարգի զարգացման ու բարեփոխումների 1996-2000 թվականների ծրագրին համադաստասխան, Երևանի առողջադահույթյան համակարգում իրականացվել են կառուցվածքային և կանոնակարգային եական փոփոխություններ:

Երևանում է կենտրոնացած երկրի առողջադահույթյան համակարգի հզորությունների 2/3-ը: 2001-2003 թվականներին առողջադահական ընկերությունները խոշորացվել են, որի հետևանքով նվազել է բուժհաստատությունների թիվը:

1936թ.
ՀԽՍՀ առողջադահույթյան
ժողովրդական
կոմիտարիատ





ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ԴԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԴԵՐԱՑԻ ԱՐԽԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Երևանի Մխիթար Դերացու անվան Պետական բժշկական համալսարանում արդեն 1 տարի է, ինչ գործում է «Հերացի» արհեստակցական կազմակերպությունը. գործող և առագա ծրագրերը ներկայացնում է կազմակերպության նախագահ, դ.գ.թ. Մարթա Սինոնյանը:

Երևանի Պետական բժշկական համալսարանը տարբեր տարիներին ունեցել է արհեստակցական կազմակերպություններ, սակայն «Հերացի» արհեստակցական կազմակերպությունը նոր է, առավել երիտասարդական և ժամանակակից: Մեր նպատակն է ԵՊԲՀ բոլոր աշխատակիցներին երիտասարդական նոր շնչով հետաքրքիր նախաձեռնությունների մաս դարձնելը:

Արհեստակցական կազմակերպությանը կարող են անդամագրվել բոլորը առանց մասնագիտական սահմանափակումների անվտանգության աշխատակիցներից, հավաքարարներից, ադմինիստրացիոն կազմից մինչև ամբիոնների աշխատողներ, կլինիկաների բժիշկներ, կլինիկական և տեսական ամբիոնների աշխատակիցներ, ռեկտորատի անդամներ, «Մուրացան» համալսարանական կլինիկայի, №1 համալսարանական հիվանդանոցային համալիրի, «Հերացի» ավագ դպրոցի աշխատակիցները: Մի խոսքով, բոլոր այն անձինք, ովքեր գրանցված են որդես Երևանի Պետական բժշկական համալսարանի աշխատակից: «Հերացի» արհեստակցական կազմակերպության ծրագրերը մի քանիսն են.

Գիտական համագործակցության եզրեր հարակից ամբիոնների աշխատակիցների համար

Այս կերպ նշյալ ամբիոնների աշխատակիցներին, կազմակերպության նախաձեռնությամբ և ֆինանսավորմամբ, հնարավորություն է ընձեռնվում

իրենց գիտական, առողջադասական, ինֆորմատիկ ծրագրերը ներկայացնել «Հերացի» արհեստակցական կազմակերպություն և իրականացնել համատեղ աշխատանքի քննարկումները Օնլայն ժողով երիտասարդական համալիրում՝ համատեղելով հանգիստը և աշխատանքը:

Արդեն իսկ համագործակցության եզրեր են գտել ԵՊԲՀ դեղագիտական ամբիոնները՝ դեղագործության կառավարման և ֆարմակոգնոզիայի ամբիոնները, դեղերի տեխնոլոգիայի, ֆարմակոլոգիայի, կլինիկական ֆարմակոլոգիայի և ֆարմացիայի ամբիոնները:

Անգլերենի որոհեսիոնալ դասընթացներ ԵՊԲՀ աշխատակիցների համար

Երևանի Պետական բժշկական համալսարանը եռալեզու ԲՈՒՀ է, և խիստ կարևոր է շփումը օտարազգի ուսանողների հետ, ինչպես դասավանդող, այնպես էլ վարչական անձնակազմի համար:

2015 թվականին ԵՊԲՀ արհեստակցական կազմակերպությունների ղառնության մեջ առաջին անգամ մենք սկսեցինք անգլերեն լեզվի որոհեսիոնալ դասընթացները: Հաջողությամբ դասընթացներն ավարտեցին երկու խմբեր A2 և B1 + մակարդակով և ստացան անգլերենի իմացության հավաստագրեր: Ուրախությամբ լի ենք, որ արձագանքը և հետաքրքրությունը մեր այս նախաձեռնության նկատմամբ բավական մեծ էր, և արդեն 2016-ի փետրվարի 15-ից դասընթացներին մասնակցում են արդեն 4 խմբեր: Կարևոր են համարում այն փաստը, որ անգլերենի դասընթացներին կարող են մասնակցել ոչ միայն ԵՊԲՀ դասախոսները, այլ նաև Հերացի ավագ դպրոցի ուսուցիչները: Հուսով ենք, որ անգլերենի որոհեսիոնալ դասընթացների ծրագիրը կլինի շարունակական:

Այսօր արդեն, ի ուրախություն, ունենք լավագույն գնահատականներ «Հերացի» արհեստակցական կազմակերպության կողմից իրականացվող անգլերենի դասընթացների ծրագրի վերաբերյալ:

Սոցիալական աջակցություն ԵՊԲՀ աշխատակիցներին

Արհեստակցական կազմակերպության առջև դրված կարևորագույն խնդիրներից է ԵՊԲՀ աշխատակիցների սոցիալական հոգսի թեթևացումը, մենք փորձում ենք ձեռք մեկնել այն անձանց, ովքեր այս կամ այն խնդրով դիմում են տարբեր կառույցների, և հաճախ որդես լուստասխան, սոցիալական օգնության մերժում ստանում:

2015թ.-ի հոկտեմբերի 1-ից մինչև 2016թ.-ի հունվարի 1-ը «Հերացի» արհեստակցական կազմակերպության հրամանով ստեղծված «Սոցիալական հարցերի հանձնաժողովի» նախագահի հանձնարարմամբ ԵՊԲՀ 291 աշխատակիցների տրամադրվել է տարբեր չափի դրամական օգնություն ԵՊԲՀ սոցիալական ծանր վիճակում գտնվող աշխատակիցներին բուժզննում անցնելու, հիվանդությունների բուժման, դեղորայքի ձեռքբերման նպատակով, ինչպես նաև ընտանիքի անդամներից որևէ մեկի մահվան դեպքում:

Մեր ԲՈՒՀ-ը լի ենք է ունենա առողջ եւ մարզված աշխատակիցներ

ԵՊԲՀ-ն, իհարկե, ունի սեփական սպորտդահլիճ, սակայն մենք առաջարկում ենք նաև այլընտրանքային տարբերակ: Golds Gym սպորտային համալիրի հետ համատեղ, անդամարված բոլոր անձանց առաջարկում ենք ձեռք բերել կորպորատիվ փաթեթ, որը, կախված աշխատակցի աշխատանքային փորձից, դրսևցիոն համակարգով ավելի մատչելի է դառնում:

Տեսակցություն ԼԴՀ սահմանամերձ զորամասերում ծառայող որդիների հետ

2016 թվականի փետրվարից «Հերացի» արհեստակցական կազմակերպությունը կազմակերպում է ԵՊԲՀ աշխատակից-ծնողների անվճար այցեր Արցախում իրենց ժամկետային զինծառայությունն անցնող որդիներին:

Միջազգային համագործակցություն

Զարգացած աշխարհի բոլոր ԲՈՒՀ-երը և ընկերություններն ունեն արհեստակցական կազմակերպություններ, ուստի, «Հերացի» արհեստակցական կազմակերպության հիմնադիր-անդամներից մի քանիսը զբաղվում են հենց միջազգային համագործակցության եզրեր փնտրելով: Արդեն իսկ ունենք կոնտակտներ եվրոպական մի շարք երկրների, ամերիկյան ԲՈՒՀ-երի: Մեր նպատակն է ընդլայնել համագործակցության եզրերը, ստեղծել և իրականացնել նոր ծրագրեր օտարերկրյա մեր գործընկերների հետ: Առաջիկայում լուստրաստվում ենք իրականացնել փոխանակային ծրագրեր և նոր շունչ հաղորդել մեր աշխատակիցների առօրյային և կատարել փորձի փոխանակում:

Համագործակցություն համալսարանական կլինիկաների աշխատակիցների հետ, հետաքրքիր նախաձեռնություններ այնտեղ բուժվող հիվանդների համար

Արդեն իսկ իրականացրել ենք ամանորյա միջոցառում Մուրացան համալսարանական կլինիկայում բուժում ստացող երեխաների համար. այն փոքրիկներին, ովքեր լի ենք է ամանորի գիշերն անցկացնելին հիվանդանոցում, հյուր գնացին Ձմեռ Պառլը և մուսիներուն: Նույն կլինիկայում բուժում ստացող երեխաների լուստկերած նկարների համար կազմակերպեցինք ցուցահանդես-վաճառք, և ստացված հասույթը կօգտագործվի հիվանդանոցի խաղասենյակի կահավորման համար:




Ռաֆայել Փարսադանյան

բժշկագիտության տատանաբան,
բժշկական գիտությունների դոկտոր,
դոկտոր

1956-1973 ՝ «Առողջապահություն»
հանդեսի հիմնադիր գլխավոր խմբագիր,
կոլեգիայի նախագահ



Ամբողջացնելով «Առողջապահություն» ամսագրի 60-ամյա հոբելյանին
նվիրված մեր տարբերակների նորոգի լույս ընծայումը՝ վերատառագրում ենք
ամսագրի 1956 թվականի առաջին համարից մի քանի ուշագրավ էջ...



«Ա. Ռ. ՈՂԶԱՊԱՀ ՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՆԴԵՍԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Հարգելի ընկերներ:

Սովետական Հայաստանում «Առողջապահություն» հանդեսի լույս ընծայումը նշանակալից իրադարձություն է սովետական բժշկական մասնա-
լի համար, այն հանդիսանում է սովետական ա-
ռողջապահության անշեղ զարգացման նկատմամբ
Կոմունիստական պարտիայի և Սովետական կա-
ռավարության ցուցաբերած ամենօրյա հոգատա-
րության նոր վառ արտահայտությունը: Հանդեսի
հրատարակությունն սկսվում է այնպիսի ժամանա-
կաշրջանում, երբ սովետական առողջապահական
օրգանները ձեռնամուխ են եղել առողջապահու-
թյան հետագա զարգացման վերաբերյալ ՍՄԿՊ
XX համագումարի դիրեկտիվների կենսագործմա-
նը, ամբողջ պրոֆիլակտիկ գործունեության և
բնակչության բժշկական սպասարկման կուլտու-
րայի վերելքին: Այնպիսի առաջնահերթ խնդիրներ
ինչպիսիք են ժողովրդի առողջության պահպան-
ման և մարդկանց կյանքի երկարացման նկատ-
մամբ առողջապահության ասպարեզի գիտական
ու պրակտիկ աշխատողների լայն շրջանների ուշա-
դրության կենտրոնացումը, գիտության նվաճում-
ների և ֆադաֆի ու գյուղի աշխատավորության
բուժ-պրոֆիլակտիկ սպասարկման առաջավոր
փորձի, երկրամասային պարբերականի այժմեա-
կան պրոբլեմների մասնաշաղկապումը, պետք է
գտնվեն նոր հանդեսի ուշադրության կենտրոնում:

Առողջապահության միջնորդությունը հուսով
է, որ նոր հանդեսը արժանի տեղ կգրավի բժշկա-
կան մյուս պարբերականների շարքում և կկարողանա
առողջապահության պրակտիկ աշխատող-
ներին ու գիտության գործիչներին մոբիլիզացնել
արագորեն իրականացնելու սովետական ու ա-
ռասանման ընդհանուր բժշկական գիտության նվաճում-
ները և գործուն օգնություն ցույց տալ Հայաստա-
նի առողջապահության օրգաններին հաջողու-
թյամբ կենսագործելու այն խնդիրները, որ նրանց
առաջադրել են Կոմունիստական պարտիան ու Սո-
վետական կառավարությունը:

Թույլ տվե՛ք ՍՍՌ Միության Առողջապահության
միջնորդության կողմից ձեզ լավագույն հաջողու-
թյուններ ցանկանալ անհրաժեշտ և պատասխանա-
տու աշխատանքում:

Ն. Կոբյակով

ՍՍՌ Մ Առողջապահության միջնորդ

«Առողջապահություն» հանդեսի առաջին հա-
մարի լույս ընծայման օրը՝ նրա կոլեկտիվին հղում
ենք ջերմ ողջույն և հաջողությունների լավագույն
ցանկություններ:

Վստահ ենք, որ նոր հանդեսը հաստատակա-
մորեն կպայքարի Կոմունիստական պարտիայի և
Սովետական կառավարության կողմից առողջա-
պահության ասպարեզի աշխատողներին առաջա-
դրված խնդիրների կենսագործման համար:

«ԿՈՄՈՒՆԻՍՏ» ԹԵՐԹԻ
ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հագարավոր ընթերցողների ու թղթակիցների
անունից ողջունում ենք «Առողջապահություն»
հանդեսի լույս ընծայումը:

Հուսով ենք, որ նոր հանդեսը պատվով կկատա-
րի բժշկական աշխատողների, մանավանդ երի-
տասարդ բուժաշխատողների հարուստ առօրյան
հմտորեն լուսաբանելու իր դերը, կնպաստի այն
մեծ, շնորհակալ գործունեությանը, որ ամեն օր
ծավալում են ժողովրդի անխնայ ծառաները՝
բժիշկները:

«ԱՎԱՆԳԱՐԴ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Առողջապահություն» հանդեսի հրատարակու-
մը ուրախալի երևույթ է: Պրոֆիլակտիկայի և ճի-
վանդությունների վերաբերմամբ գիտելիքներ, խոր-
հուրդներ տալը մեր աշխատավորությանը, նորա-
հաս պատանեկությանը և առհասարակ ամենին
շատ օգտակար և անհրաժեշտ գործ է:

Բոլոր սրտով ողջունում ենք այս ձեռնարկը և
ցանկանում ենք նրա գիտաշխատողներին եռանդ,
անձնվիրում, որոնց շնորհիվ միայն հնարավոր
կլինի իրականացնել ուրախ, գործունյա և երկար
կյանք:

Հարգանքներով՝

Ալեք. Խաչատրյան

Մտազին շնորհավորում են մայրենի լեզվով
առողջապահական նոր հանդեսի ծնունդը: Ցանկա-
նում են լավագույն հաջողություններ:

Է. ՀԱՍՐԱԹՅԱՆ

ՍՍՌ Մ Գիտությունների ակադեմիայի
թղթակից-անդամ



Ռուսական առաջին ռեկուլցիայի մասնակից, 1902 թվականից պարտիայի անդամ ԳԵՐՄԱՆԻՄ
ՄԵԼԻՔ-ԳՐԻԳՈՐՅԱՆԸ, շնայած իր պատկանելի տարիքին, երիտասարդական ավյունով շարունա-
կում է աշխատել Երևանի Երկարուղու սանիտարա-էպիդեմիոլոգիական կայանում որպես գլխավոր
բժիշկ: Գ. ՄԵԼԻՔ-ԳՐԻԳՈՐՅԱՆԸ պարգևատրվել է Լենինի շքանշանով: Նա Հայկական ՍՍՌ Գերագույն
Սովետի դեպուտատ է:

ՆԿԱՐՈՒՄ. — Վաստակավոր բժիշկ Գ. ՄԵԼԻՔ-ԳՐԻԳՈՐՅԱՆԸ և բժիշկ Ա. ՎԱՐԳԱՆՅԱՆԸ լաբորա-
տորիայում:

Ֆոտո՝ Հ. ՀԵՔԵՔՅԱՆԻ

ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

Պենիցիլինի հայտնագործումը ժամանակակից բժշկության ամենախոշոր նվաճումներից մեկն է։ Պենիցիլինագիտությունը կամ պենիցիլինարոսությունը կարճ ժամանակում ստեղծել է բավականին հարուստ գրականություն։ Եվ որքան նրա օգտագործումը բժշկության տարբեր բնագավառներում դրական արդյունքներ է տալիս, այնքան մեծանում է պրպտող մտքի տեր մարդկանց հետաքրքրությունը պենիցիլինի նկատմամբ։

Այդպիսի հետաքրքրության արդյունք է վերջերս նախ Մոսկվայում, ապա Երևանում լույս տեսած՝ բազմավաստակ գիտնական Ռ. Յուլյանի «Պենիցիլինի կիրառումը խիրուրգիայում» ծավալուն աշխատությունը։ Սա Սովետական Միության Գերագույն Սովետի ղեկավարությամբ, ՍՍՌՄ Բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, Հայկական ՍՍՌ գիտության վաստակավոր գործիչ պրոֆ. Ռ. Յուլյանի վերջին աշխատությունն է։

Շուրջ 28 տարի նա իր կյանքը նվիրել է բժշկական գիտության ու պրակտիկայի զարգացմանը։ Մեծ է նրա ծառայությունը բժշկական կադրերի պատրաստման և, հատկապես, Հայաստանի բժշկական գիտական մտքի զարգացման գործում։ Ռ. Յուլյանի գրչին են պատկանում ծայրամասային պաթոլոգիայի, վիրաբուժական ինֆեկցիաների, արչան փոխներարկման ակտուալ հարցերին նվիրված ավելի քան 50 գիտական աշխատություն։ Պրոֆ. Յուլյանը 1946 թվականից Վիրաբույժների համամիութենական ընկերության վարչության անդամ էր, իսկ 1953 թվականից Վիրաբույժների միջազգային ասոցիացիայի անդամ։ Յուլյանը պարգևատրված է Լենինի, Աշխատանքային Կարմիր դրոշի, Կարմիր աստղի շքանշաններով և մեդալներով։ «Պենիցիլինի կիրառումը խիրուրգիա-



Պրոֆ. Ռ. ՅՈՒԼՅԱՆ


յում» աշխատությունը բաղկացած է 21 գլուխներից, որոնք շնայած ներկայացնում են խիրուրգիական ինֆեկցիոն տարբեր հիվանդությունների մասին առանձին-առանձին ուսումնասիրություններ, բայց մի ներքին կապով շաղկապված են իրար հետ։ Օգտագործելով տարբեր լեզուներով հրատարակված մի ամբողջ գրադարան, հենվելով իր սեփական գիտողությունների և այն հարուստ նյութերի վրա, որ կուտակել է նա տասնամյակից ավելի ժամանակաշրջանում՝ երեք հազարից ավելի հիվանդի պենիցիլինով բուժելու ժամանակ, հեղինակել է նոր եզրահանգումների, մշակել է կիրառական յուրօրինակ եղանակներ, որոնք միանգամայն նորություն են բժշկության մեջ և պատիվ են բերում սովետական բժշկությանը։

Իր աշխատության առաջին գլխում պրոֆ. Յուլյանը հետաքրքիր տեղեկու-

թյուններ է հաղորդում տարբեր կարգի միկրոօրգանիզմների վրա պենիցիլինի թողած ազդեցության, օրգանիզմի մեջ ցրված ինտերոեցեպտոնների, զանգուղեղի կեղևի բարդ ֆիզիոլոգիական փոփոխությունների, միկրոօրգանիզմների ձևափոխության և վերջապես արտաբնական երևույթների իսպառ չքացման մասին։

Գրքի հետագա էջերում հեղինակն այս կամ այն կապակցությամբ ավելի է պարզաբանում, ևս նկրտացնում իր եզրակացություններն ու մտքերը՝ դրանց տալով կիրառական, գործնական նշանակություն։

Աշխատության ինչպես սկզբում, այնպես էլ երկրորդ և հաջորդ գլուխներում, որտեղ խոսվում է օրգանիզմի հյուսվածքների վրա պենիցիլինի թողած տարբեր կարգի ազդեցության, պենիցիլինը օրգանիզմի մեջ մտցնելու ուղիներին, նրա դոզավորման, օրգանիզմի ռեակցիաների և բարդությունների մասին, հեղինակը բերում է հետաքրքիր փաստեր, թվեր և բազմաթիվ օրինակներ։



Առավել արժեքավոր են աշխատության այն մասերը, ուր հեղինակը նշում է պենիցիլինի կանխարգելիչ նշանակությունը, մանրամասն, հետաքրքիր ցուցումներ անում պենիցիլինի կիրառման մասին։

Հումանիզմն ու գիտությունը համատեղ են հանգես դալիս գրքի այն էջերում, ուր պրոֆ. Յուլյանը խոսում է պենիցիլինի և նովակայինի գործածման եղանակների մասին։ Նա նշում է, որ առանց վիրահատման, հատկապես ղեմքի և մարմնի բաց մասերի թարախակույտների ու ֆլեգմոնաների բուժման ժամանակ, կարելի է այնպես անել, որ վիրվեն մարդու մարմնի այդ մասերը բուժումից հետո երևացող սպիներից և բծերից։

13-րդ գլխում նա վերհուշ է կատարում ինֆեկցիոն հեմատոգեն օստեոմիելիտների բուժման մասին, երբ վիրա-

բուժության պրակտիկայում դեռևս չէր կիրառվում պենիցիլինը։ Չնայած բժշկաների գործադրած մեծ ջանքերին, այդ հիվանդությամբ տառապողների ճնշող մեծամասնությունը մահանում էր։ Այլ դարձավ դրությունը, երբ ակտեյին գործածել զանազան ղեղանյութերի խառնուրդով մեծ քանակությամբ պենիցիլին, նախօրոք պոնկցիոն ասեղով թարախը դուրս քաշելուց հետո։ Այդ կարգի հիվանդների ապացինումը դարձավ անհամեմատ հեշտ և դյուրին։

16-րդ գլխում պրոֆ. Ռ. Յուլյանը ցուցմունքներ է տալիս մատնաշունչ (պանարիցիում) հիվանդությունը պենիցիլինով բուժելու եղանակների մասին։ Գիրքը հետաքրքիր ու գիտական հարուստ նյութ է պարունակում թոքերի պլեւրալի թարախակույտների, ուղեղի պատյանների, կարմիր քամու, անգինաների, տրոմբոֆլեբոտների և այլ հիվան-

դությունների ժամանակ պենիցիլինի լայն կիրառման ու բուժման վերաբերյալ։

Մեծ է պրոֆ. Յուլյանի գրքի արժանիքը։ Հայտնահարած խախուսելի գործ է կատարել, հրատարակելով նշանավոր վիրաբույժի աշխատությունը, որը զբույս է առանց խրեմարանությունների, պարզ ու մատչելի լեզվով։ Երեք տասնյակից ավելի միկրոֆոտոները, ֆոտոնկարները, ռենտգենագրամներն ու շերտմոթյան կորագծերը ավելի են պարզաբանում, համոզեցուցիչ ու շոշափելի դարձնում նյութը։

Պրոֆ. Յուլյանը թողել է հարուստ գիտական ժառանգություն, ժամանակն է արագացնել նրա ընտիր երկրի հրատարակությունը, որի կարգը զգուժ են շատ բժիշկներ և գիտահետազոտական աշխատանքով զբաղվողներ։

Ա.ԲԱ. ԱՎԱԳՅԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻՆ

ԻՆՉՊԵՍ ՄՆԵՆ ՈՍԽԻՏՈՎ ՀԻՎԱՆԴ ԵՐԵՄԱՅԻՆ

Նրե երեխան տառապում է ռախիտով, ճրան հաճախ պետք է տալ ձվի դեղնուց։ Դեղնուցը պետք է երեխային տալ մատակարարվող երեխա ամսականից ըսկրած։ Հիեզ օրվա ձվի բարձր դեղնուցը հարել շաֆարի հետ և, լիմոնի հյութի 20—30 կաթիլների հետ, տալ երեխային։ Նման ուտելիք պետք է օգտագործել կերակրելուց հետո, սկսելով կես բեյի գդալից, ապա տալ ամբողջ դեղնուցը։ Երբ երեխան մեծանա, ձուկ կարելի է տալ առանց շաֆարի՝ ձգելով այն բանջարեղենի տույլի կամ ձավաբեղենից պատրաստած շիլայի մեջ։

Ռախիտ ունեցող երեխային կարելի է կերակրել ձկնկիրով՝ սկսած վեց ամսականից, սկզբում տալ հատիկներ, իսկ հետո այն հասցնել մի բեյի գդալի։ Ձկնկիրը պետք է օգտագործել ճաշից առաջ։ Երեխայի ճաշերին պետք է ավելացնել 1—2 բեյի գդալ աղած բարձր փայծաղ (լավ կլինի բոչուրի), եփելով վերջին ռոպեներին դրան խառնելով կարագ և աղ։

Երեանի բժշկական գիտական գրադարանը հարուստ է մասնագիտական գրականությամբ։ Այն միշտ լի է ընթերցողներով։ Բացի մայրենի և ռուսաց լեզուներով հրատարակված գրականությունից, երանք օգտվում են նաև անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, չեխերեն և այլ լեզուներով հրատարակված բերբերից, ամսագրերից, ինչպես նաև ճշգրտվող բժիշկների աշխատություններից, որոնք վերջերս գրադարանը ստացել է առատանմանից։

ՆԱՍՐՈՒՄ.— Բժշկական գիտական գրադարանի գրքերի մշակման բաժնում։ Յոտո՝ ՆԵՄՐՈՒԹԻ

ԿՐԾՔԱԳԵՂՁԵՐԻՑ ԿԱԹԸ ԿԹԵԼՈՒ ԵՎ ՆՈՐԱԺԻՆՆԵՐԻՆ ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ԱՊԱՐԱՏ

ԲԺԻՂ Ս. ՂԱ. ԶԱ. Ռ. Գ. Ս.

Ն. Կ. Կրուպսկայայի անվան մանկարարձուրյան և գիճեկոլոգիայի գիտա-հետազոտական ինստիտուտի գիտական աշխատող




անկարարձական պրակտիկայում շատ հաճախ հարկ է լինում ծնրնդ-կանի կրծքագեղձերից կթել կաթը: Այդ աշխատանքը ձեռքով կատարելը վտանգավոր է. կրծքագեղձերը և պտուկները վնասվում են և դա կարող է վարակի պատճառ դառնալ:

Առանձնապես մեծ դժվարությունների են հանդիպում այն կանայք, որոնց պտուկները ճարճեղված են: Նման դեպքերում երեխային կրծքով կերակրելը ծննդկանին ուժեղ ցավեր է պատճառում և երբեմն ստիպում կերակրումը դադարեցնել: Դրա հետևանքով կրծագեղձերում կաթը հավաքվում է, կոտրվում ծանրանում, ծննդկանին անհանգստացնում, ազդում նրա քնի վրա: Նրա ջերմաստիճանը բարձրանում է: Հասկանալի է, որ այդպիսի դեպքերում, առանց ցավ պատճառելու, կրծքագեղձերից կաթը կթելը կարևոր նշանակություն է ստանում:

Այդ կապակցությամբ անհետաձգելի պահանջ է առաջադրվում՝ ստեղծել մի ապարատ, որը կաթը ծծելու ժամանակ ծննդկանին ցավեր չպատճառի: Այժմ վաճառքի մեջ գտնվող ձեռքի սովորական կաթնածծիչը մի շարք էական թերություններ ունի: Նրա ներքին տրամագիծը (մուտքը) փոքր է (2—2,5 սմ), դրա հետևանքով պտուկը ճզմվում է և ծննդկանին ցավ պատճառում: Գործող կաթնածծիչի բացասական ճնշումը համեմատաբար մեծ է, որովհետև նրա ամբողջ սխտեմի ծավալը հավասար է 40—45 միլիմետրի, իսկ ուտինե բալոնի ծավալը՝ 35 միլիմետրի, այսինքն՝ զրեթե հավասար է առաջինին: Այսպիսի պայմաններում պտուկի վնասվելը բացառված չէ. կաթնածծիչի օգտագործման ժամանակ երբեմն կաթը լցվում է բալոնի մեջ: Կաթնածծիչը կաթը դատարկելու անցք չունի և հարմարեցված չէ նորածիններին կերակրելու համար:

Բնական է, որ այս կաթնածծիչը ամենևին բնորոշելի չէ և չի կարելի օգտագործել այն դեպքերում, երբ կնոջ պտուկները ճարճեղված են:

Ահա այս բոլոր անհարմարություններն էլ մեզ դրդեցին ստեղծել նոր կառուցվածքի կաթնածծիչ, ըստ որում հաշվի առնելով հետևյալ պահանջները՝ ստեղծել այնպիսի ապարատ, որն առանց ցավեր պատճառելու, հնարավորություն տա կթել ինչպես առողջ պտուկները, այնպես էլ ճարճեղված և բորբոքված պտուկները. կաթնածծիչը գործադրել այնպես, որ այդ գործողությունը նման լինի երեխայի ծծելու ֆիզիոլոգիական պրոցեսին, և ապա-



հովվի պտուկի շարժումը միջին գծով, պտուկի վրա գործադրվի միևնույն չափով բացասական ճնշում, կանխվի կաթի լցվելը բալոնի մեջ. ապահովվի ստերիլ պայմաններում կաթի ստացումը, ինչպես նաև՝ ապարատի հեշտ ախտահանումը: Այդ ապարատը պետք է հնարավորություն տա անհրաժեշտության դեպքում նորածին կերակրել հենց կաթնածծիչից: Նա իր կառուցվածքով պետք է լինի պարզ, օգտագործման համար հարմար և մատչելի:

Լիովին հաշվի առնելով այս կարևորագույն պա-

հանջները, մենք պատրաստել ենք ունիվերսալ կաթնածծիչ:

Ունիվերսալ կաթնածծիչը կազմված է երկու իրար հետ միացած մասերից և ուտինե բալոնից (տես նկարը):

Կաթնածծիչի վերին մասը ապակե վրադիրն է, որի արտաքին տրամագիծը կազմում է 7—7,5 սմ, իսկ ներքինը (մուտքը) 3—3,3 սմ: Վրադիրն երկարությունը (մոտիկից միայն մյուս ծայրն ընկած տարածությունը) 5—6 սմ է, ծավալը 30 միլիլիտր: Վրադիրն ետևի մասին զոդած է մի խողովակ, ըստ որում այդ խողովակի ներքին, նեղացված ծայրը մինչև մեկ սանտիմետր խորությամբ մտնում է վրադիրի մեջ և տեղադրված է մուտքին ճիշտ ուղղահայաց: Արտամղող խողովակի արտաքին ծայրին միացված է 35 խորանարդ միլիլիտր տարողությամբ ուտինե բալոն: Վրադիրն ունի միմյանց զուգահեռ պատեր, որոնք ապահովում են պտուկների նորմալ աշխատանքը, կանխում ճեղքվածքներ առաջանալը:

Կաթնածծիչի ստորին մասը կաթ ընդունիչն է: Վերջինս տեղադրված է ապարատի վերին մասի նկատմամբ 120°—135° անկյան տակ (կաթի լավ հոսքի համար): Կաթը ընդունիչը ձվաձև է և հարմար է ձեռքով բռնելու համար: Նա վերին մասում ունի արտամղիչ անցք (ծունկ) 1 սմ տրամագիծով, որը փակվում է ուտինե խցանով: Այդ անցքը ծառայում է կաթի դատարկման, ինչպես և նորածին կերակրելու դեպքում ուտինե ծծակ հագցնելու համար: Կաթը ընդունիչը աստիճանագծված է. այն լինում է երեք չափի (50, 60 և 65 միլիլիտր):

Կաթնածծիչը պետք է օգտագործել հետևյալ ձևով.

Վրադիրն եզրին հարկավոր է քսել ստերիլ յուղ, մի ձեռքով բռնել կաթը ընդունիչը և ապարատի վերին մասը զգուշությամբ դնել կրծքի վրա, այնպես, որ պտուկը գտնվի վրադիրի կենտրոնում: Մյուս ձեռքով պետք է դանդաղ և համաչափ սեղմել ուտինե բալոնը: Երբ կաթը կսկսի լցվել կաթը ընդունիչը, սկզբում անհրաժեշտ է մի քանի րոպե թեթևակի սեղմելով բալոնը, կրծքից հեռացնել, ստուգել ծննդկանի ինքնազգացությունը: Բալոնի հագիվ նկատելի շարժումներից պտուկըն աստիճանաբար մտնում է վրադիրի անցքը: Դրանից հետո հարկավոր է բալոնը մի քիչ ավելի եռանդուն կերպով սեղմել, իսկ երբ երևա կաթի առաջին կաթիլը, ապա շարունակել եռանդուն կերպով սեղմել այն: Բալոնը լրիվ կարելի է սեղմել միայն այն դեպքում, եթե կթումը ծննդկանին ցավ չի պատճառում: Կաթնածծիչը չի կարելի թողնել կրծքի վրա, այն պետք է հանել ժամանակին. դրա համար հարկավոր է բալոնը մինչև վերջը սեղմել, որի հետևանքով կաթնածծիչում ճնշումը կբարձրանա և հեշտ կլինի այն ազատել պտուկից:

Կթելու ժամանակ անհրաժեշտ է հիշել, որ կաթը ընդունիչում, կաթի հավաքմանը զուգընթաց, օդը դուրս է մղվում և ապարատում բացասական ճնշումը մեծանում է, ուստի կաթը ընդունիչը չպետք է լրիվ լցնել կաթով: Մենք խորհուրդ ենք տալիս այն լցնել մինչև կեսը կամ ամենաշատը՝ մինչև ծավալի 3/4 մասը:

Այն դեպքում, երբ անհրաժեշտ է կերակրել նորածին, ապա արտամղող անցքից պետք է հանել խցանը, դրա վրա հագցնել ուտինե ծծակ:

Ճեղքվածքներ ունեցող և բորբոքված պտուկներին համար պետք է օգտագործել կաթնածծիչը, որի ընդհանուր ծավալը կազմում է 95 մլ (30 մլ վրադիրը, 65 մլ կաթը ընդունիչը): Ուտինե բալոնը բոլոր դեպքերում նույնն է, նրա ծավալը կազմում է 35 մլ: Ոչ մեծ ճարճվածքների դեպքում կարելի է օգտագործել 60 մլ ծավալի կաթը ընդունիչ ունեցող կաթնածծիչ:

Կթելուց հետո ապարատը պետք է եռացնելու միջոցով ախտահանել, նախապես հանելով ուտինե բալոնը և կաթը ընդունիչի արտամղիչ անցքի խցանը:

Մեր առաջարկած կաթնածծիչը կարող են օգտագործել ինչպես առողջ, այնպես էլ հիվանդ պտուկներ ունեցող ծննդկանները: Նոր կաթնածծիչն ունի հետևյալ առավելությունները. այն կրթում է առանց ցավի, որովհետև մուտքի համեմատաբար լայն անցքը և վրադիրն զուգահեռ պատերը պտուկները պահպանում են ճզմումից և ճեղքվածքներ առաջանալուց:

Վրադիրն մեջ մտնող արտամղիչ խողովակն ունի զրեթե մազանոթային անցք, որտեղից կաթը բալոնի մեջ չի լցվում, իսկ կրծքապտուկը շարժվում է խստորեն միջին գծով:

Կաթնածծիչն օգտագործելիս կարելի է ճշգրիտ որոշել կթած և նորածին ծծած կաթի քանակը:

Հայկական ՍՍՌ Մանկաբարձության և գինեկոլոգիայի գիտա-հետազոտական ինստիտուտում և Երևանի քաղաքային № 1 ծննդատանը նոր ապարատի փորձարկումը լավ արդյունք տվեց:

Նկարագրված ունիվերսալ կաթնածծիչի վարիանտներից մեկը 1954 թվականին հաստատել է Հայկական ՍՍՌ Առողջապահության մինիստրության Գիտական խորհուրդը:

Ներկայումս հասունացել է նոր կաթնածծիչի մասսայական թողարկման անհրաժեշտությունը: Հարկավոր է, որ շահագրգռված կազմակերպությունները լրջորեն հոգ տանեն այս խնդրի մասին և ապահովեն նոր ապարատի լայն գործադրումը առողջապահության ասպարեզում: Կարծում ենք, որ Հայկական ՍՍՌ Առողջապահության մինիստրությունը կդիմի գործնական միջոցառումների:

Մ Ե Ր Դ Ո Ն Ո Ր Ն Ե Ր Ը

Ուշ գիշեր է: Երևանի № 1 ծննդատան մուտքի մոտ կանգ առավ շտապ օգնության ավտոմեքենան: Ծննդատուն բերվեց մի գունատ կին:

— Անսպասելի կերպով զույգ երեխա ունեցավ, ժամանակին չկարողացանք ծննդատուն բերել,— արցունքն աչքերին հայտնում է կնոջ հարագատեններից մեկը: Բժիշկը զննում է նիվանդին և, դառնալով բուժակին, կարգադրում,— արյունահափամ է Լոլել, հարկավոր է արյուն ներարկել:

Հաջորդ օրը արդեն վտանգն անցել էր: Մայրը նայում էր երկվորյակներին և հրճվում:

Քանի՞, քանի՞ այսպիսի ծանր հիվանդների են կյանք տվել մեր հայրենասեր ղոնորները:

Անա նրանցից՝ Մուրադյանների ընտանիքը: Մայրը և երկու աղջիկները տաս տարի է, որ Երևանի Արյան փոխ-ներարկման ինստիտուտի ղոնորական բաժնին են տալիս իրենց արյունը: Այս ընտանիքը արդեն տվել է 65 լիտր արյուն: Բազմաթիվ անհույս հիվանդներ կյանք են ստացել Մուրադյանների արյան ներարկումից:



ՆԿԱՐՈՒՄ.— Դոնորների ընտանիքումայրը՝ Սոնյան (կենտրոնում) և նրա զուտուրե Շողակարու Մայրանուշ Մուրադյանները:

Անա մի ուրիշ ընտանիք: Հայրը՝ Վահագնի Մուրադյանը, նրա կինը, երկու տղաները և հարսը ղոնորական բաժնի ամենահին ակտիվիստներից են:

25 տարի առաջ, երբ Երևանում ղոնորական բաժինը դեռևս ճոր էր կազմակերպվել, առաջինն արյուն տվեց 3-րդ հիվանդանոցի սանիտար՝ Անդրեաս Ավագյանը: Մինչև այսօր էլ նա ակտիվ ղոնոր է:

Այսպիսի ղոնոր-հայրենասերների թիվը մեծ է: Եվ պատահական չէ, որ ղոնորները շրջապատված են մեծ հոգատարությամբ: Նրանք պարբերաբար են քարկվում են բազմակողմանի բժշկա-

կան ֆենուրյան, ինստիտուտից ստանում են ուժեղ սնունդ, ուղարկվում հանգրսուտյան տներ: Վերջերս 243 ակտիվ ղոնորներ, որոնք տարիների ընթացքում տվել են 60-ից մինչև 110 լիտր արյուն, արժանացել են Սովետական Միության պատվավոր ղոնորի կոչման:

Արյան փոխներարկման ինստիտուտի կլինիկական բաժանմունքում միայն այս տարի՝ արյան ներարկման շնորհիվ առողջացել է ավելի քան 110 ծանր հիվանդ: Իսկ Երևան մեծ է ռեսպուբլիկայի մյուս բուժֆունկցիաներում բուժվածների թիվը:



Ավելի քան երեսուն տարի մանկաբույժ է ԴՌԻՍՅԱ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆԸ: Աշխատելով Երևանի 2-րդ միավորված հիվանդանոցի մանկական բաժանմունքում, նա պատվով է կատարում իր պարտականությունները մանուկների առողջության պահպանման գործում և իր հարուստ փորձը սիրով հաղորդում երիտասարդ բժիշկներին:

Ֆոտո՝ Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՏԱՄՈՔՍԻ ԵՎ ՏԱՍՆԵՐԿՈՒՄԱՏՆՅԱ ԱՂԻՔԻ ԽՈՑԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԲՈՒԺՈՒՄԸ ՍԻՆԵՍՏՐՈՒՈՎ

Բժիշկ Մ. Ա. Վ. Ա. Գ. Յ. Ա. Ն.

Երևանի 5-րդ միավորված ճիվանդանոցի քերականի բաժանմունքի վարիչ



արդու ծանրագույն հիվանդություններից է խոցային հիվանդությունը, որը ունենում է համառ խրոնիկական ընթացք և բարդ հետևանքներ: Այդ հիվանդությամբ մարդիկ հիմնականում տառապում են 20—60 տարեկան հասակում:

1950 թվականին պրոֆ. Ն. Ա. Շերշևսկին առաջարկեց խոցային հիվանդությունը բուժել սինեստրոլով: Նա 1—2 ամսվա ընթացքում հիվանդին նշանակում էր 0,001 սինեստրոլի հաբ (տաբլետակա) կամ՝ 0,1 տոկոսանոց սինեստրոլի չուղային լուծույթով կատարել 1 մլ միջմկանային ներարկում՝ երկու օրը մեկ անգամ:

Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ պրոֆ. Ն. Ա. Շերշևսկու առաջարկած մեթոդով բուժումը երկարատև է, հիվանդը դժվարանում է 1—2 ամիս պառկել հիվանդանոցում կամ հաճախել պոլիկլինիկա: Մենք փորձեցինք սինեստրոլի դոզան ավելացնելու և ներարկումների միջև ընկած ժամանակը կրճատելու միջոցով կարճացնել հիվանդության բուժման տևողությունը: Ելնելով դրանից մենք նշանակեցինք սինեստրոլի 1—2 տոկոսանոց չուղային լուծույթի միջմկանային ներարկումներ 1 մլ՝ օրը մեկ անգամ:

Այս մեթոդով բուժումը ցույց տվեց, որ սինեստրոլի ներգործության շնորհիվ խոցային հիվանդության ախտանշաններից ալոցը, գոտցը, սըրտխառնությունը և փսխումը 4—8 օրվա ընթացքում վերանում են: 8—12 օրից հետո հիվանդի ստամոքսի շրջանի ցավերը դադարում են, իսկ խոցի մակերեսը սպիանում է 25-րդ օրը: Պարզվեց նաև, որ բուժման ընթացքում և դրանից հետո հիվանդը աշխուժանում է, բարելավվում է ախորժակը, ավելանում է կշիռը, բարձրանում է աշխատունակությունը: Ինչպես ստամոքսազյուծի գերթիվու-

թյունը, այնպես էլ ցածր թթվությունը մոտենում է նորմային, իսկ նորմալ թթվությունը պահպանվում է:

Նկատի ունենալով սինեստրոլի անոթալայնիչ հատկությունը՝ արյունահոսող խոցերի դեպքում սինեստրոլով բուժումը նշանակվում է արյունահոսությունը դադարեցնելուց հետո: Այդ նպատակով հիվանդին տրվում են արյան մակարդունակությունը բարձրացնող հայտնի միջոցներ՝ վիկասոլ, կալցիում քլորի կամ կերակրի աղի հիպերտոնիկ լուծույթներ, արյան փոխներարկում: Արյունահոսությունը դադարեցնելուց հետո միայն նշանակվում է սինեստրոլ:

Բուժման ընթացքում մենք ուսումնասիրեցինք թե սինեստրոլը մարդու օրգանների և սիստեմների վրա ինչպիսի ազդեցություն է թողնում, պարզվեց, որ դեղանյութը շնչառության օրգանների և սիրտ-անոթային համակարգության վրա ոչ մի վնասակար ներգործություն չի ունենում. բնդհակառակը վերանում են անգիոսպաստիկ երևույթները, իջնում է արյան ճնշումը, լավանում է սըրտի մկանների տրոֆիկան և միոկարդիոդիստրոֆիաների ժամանակ սրտի տոները դառնում են ավելի մաքուր և հնչեղ:

Առողջ լյարդի և երիկամների վրա սինեստրոլը բացասական ազդեցություն չի թողնում, սակայն այդ երկու օրգանների, ինչպես նաև լեղուղիների սուր կամ խրոնիկ հիվանդության դեպքում, սինեստրոլի ներգործությունը սրում է նրանց հիվանդագին բնույթը: Սինեստրոլի մեր առաջարկած դոզան բացասական ազդեցություն չի թողնում նաև փայծաղի, աղիների, սեռական օրգանների, ներվային համակարգության, զգայարանների, ինչպես նաև արյան ու արնաստեղծ օրգանների ֆունկցիաների վրա: Սինեստրոլը հակացուցված է կանանց սեռական օրգանների և կրծքագեղձերի շարորակ ու բարորակ ուռուցքների, արգանդային արնահոսությունների, լյարդի ու երիկամների հիվանդությունների, ինչպես նաև հղիության դեպքում:

Ինչպես վերևում ասացինք, սինեստրոլով բուժման ժամանակ հիվանդի ստամոքսի շրջանի ցավերը դադարում են 8—12-րդ օրը: Բուժման հենց առաջին օրվանից ցավը հանգստացնելու համար մենք նշանակեցինք նարկոտիկներ: Ստամոքսի հյուծի գերթիվության դեպքում տալիս էինք 1 մլ 0,1 տոկոսանոց ծծմբաթթվային ատրոպին, իսկ նորմալ կամ ցածր թթվության դեպքում՝ պրոմիդոլ կամ պանտոպոն: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նարկոտիկ նյութերը չեն նսեմացնում սինեստրոլի անտիսպազմատիկ, պրոֆիլերատիկ և հիպերպլաստիկ հատկությունները:


Սինեստրոլը համորալ և ռեֆլեկտոր ճանապարհով ազդում է կենտրոնական ներվային համակարգի վրա և կանոնավորում նրա գործունեությունը, որի խանգարումը հանդիսանում էր զգալի թվով մարդկանց խոցային հիվանդության առաջացման պատճառը:

Սինեստրոլով 25-օրյա բուժման շնորհիվ խոց ունեցող 67 հիվանդների 90,2 տոկոսը լրիվ առողջացել է: Այդ հիվանդների 6 տոկոսի մոտ առաջ է եկել կլինիկական լավացում, խոցերը զգալիորեն փոքրացել են, բայց չեն վերացել, իսկ հիվանդների երեք տոկոսի մոտ, թեև հիվանդության ախտանիշները վերացել են, սակայն խոցերը մնացել են անփոփոխ: 58 հիվանդներից 33-ի մոտ հայտարարվել էր տասներկուամսյա աղիքի դեֆորմացիա, իսկ 25-ի մոտ՝ դեֆորմացիա ու խոց: Սինեստրոլով 25 օր բուժելուց հետո հիվանդների 48,2 տոկոսը լիովին առողջացել է: Նրանց առողջացումը հաստատվել է նաև ռենտգենով հետազոտելու միջոցով: Ինչ վերաբերում է մնացած 51,8 տոկոսին, ապա նրանք թեև առողջացել են կլինիկապես, սակայն դեֆորմացիան մնացել է անփոփոխ կամ միայն փոքրացել է:

Մեր հսկողության տակ եղած հիվանդների բուժման հեռավոր արդյունքների ստուգումից պարզվել է, որ հիվանդությունը կրկնվել է յոթ դեպքում՝ չորս տարի հետո մեկ հիվանդի մոտ, երեք տարի հետո՝ երկու հիվանդի մոտ, երկու տարի հետո՝ երեքի մոտ և մեկ տարի հետո՝ մեկ հիվանդի մոտ: Ըստ ռենտգենային և լաբորատոր ստուգման տվյալների, այդ հիվանդներից մեկի մոտ հայտարարվել է տասներկուամսյա աղիքի խոց, երեք հիվանդի մոտ՝ տասներկուամսյա աղիքի դեֆորմացիա և երեք հիվանդի մոտ՝ դաստրիտ:

Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ սինեստրոլը բուժիչ նշանակություն է ունենում ստամոքսի և տասներկուամսյա աղիքի խոցերի, ինչպես նաև ստամոքսի լորձաթաղանթի բորբոքման և ստամոքսի հյուծի թթվության խանգարումների դեպքում, իսկ սպիացումների և դեֆորմացիաների ժամանակ նա բուժական ոչ մի ազդեցություն չի թողնում:

ՎԻՐԱՆԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇԻՆ



Մեր ռեպուրիկայի աշխատավորները լավ են ճանաչում Հայկական ՍՍՌ Առողջապահության մինիստրության գլխավոր վիրաբույժ պրոֆ. Ռուբեն Պարոնյանին և մեծ հարգանքով են խոսում նրա մասին: Կատարելով բարդ վիրահատություններ, նա վերականգնել է բազմաթիվ ծանր հիվանդների առողջությունը, փրկել նրանց կյանքը:

Պրոֆ. Պարոնյանը բեղմնավոր աշխատանք է կատարում նաև երիտասարդ մասնագետներ պատրաստելու ուղղությամբ: Նա Երևանի բժշկական ինստիտուտի ֆակուլտետային վիրաբուժության ամբիոնի վարիչն է:

ՆԿԱՐՈՒՄ.— Պրոֆ. Ռ. Պարոնյանը (աջից) և բժշկական գիտությունների բեկեաժու Հ. Զաղինյանը ուսանողների ներկայությամբ վիրահատություն կատարելիս:

ԱՇԽԱՏԱԿԱՆ ՎԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Սովետական Միության Կարմիր խաչի ընկերությունը բնակչության առողջապահության ամրապնդման գործին օգնող մասնաճյուղն է։ Կարմիր խաչի ընկերությունը բնակչության առողջապահության ամրապնդման գործին օգնող մասնաճյուղն է։

Կարմիր խաչի ընկերության կազմակերպությունների շարքում արժանի տեղ են զբաղեցնում նաև Հայկական ՍՍՌ-ի Կարմիր խաչի կազմակերպությունները։ Վերջին տարիներին մեր ռեսպուբլիկայի Կարմիր խաչի ընկերության ղեկավարներն աշխուժացրել է իր աշխատանքները։ Նա 1955 թվականին ունեւր 3 169 կազմակերպություն՝ ավելի քան 124 հազար անդամով, իսկ 1956 թվականին նրա կազմակերպությունների թիվը արդեն հասնում է 3 413-ի, անդամների թիվը՝ մոտ 162 հազարի։

Ընկերության հիմնական խնդիրներից է սանիտարական ձևավորումների ու մասնաճյուղի կազմակերպության ամրապնդման կազմակերպության ամրապնդման ունի երկու հիմնական նպատակ։ առաջին՝ աշխատավորությանը ծանոթացնել բժշկա-սանիտարական գիտելիքներին և երկրորդ, նրանց ընդգրկել նոր քառանկյունի սան-ձևավորումներում։

Վերջերս անցկացված ստուգումից պարզվեց, որ Կարմիր խաչի Երևանի շրջկոմների և առողջապահության առանձին հիմնարկների ղեկավարների անպատասխանատու վերաբերմունքի պատճառով սանիտարական ձևավորումները համարյա աչքաթող են արված։ Չնայած քաղաքային առաջինը մի շարք բուժ-աշխատողների հանձնարարել է պարամունքներ անցկացնել սանիտարական ձևավորումների անդամների հետ, բայց մինչև օրս էլ որոշ տեղերում գործը տեղից չի շարժվում։ Անցած հինգ ամիսում ընթացքում մասնաճյուղի ոչ մի

աշխատանք չի տարվել ճաշարանների տրեստի, կոշիկի ու կարի ֆաբրիկաների, մսի կոմբինատի բանվոր-ծառայողների շրջանում։ Ավելի վատ վիճակում են բնակարանային վարչություններին կից տն-դամասերի սանիտարական պոստերը, որոնց մեծամասնությունը բացարձակապես չի գործում։

Ինչպես հայտնի է ռեսպուբլիկայի 31 շրջաններում առաջինների վարիչները միաժամանակ հանդիսանում են Կարմիր խաչի ընկերության շրջկոմների նախագահներ, բայց ոչ բոլորն են անհրաժեշտ ուղադրություն նվիրում իրենց պարտականությունների կատարմանը։ Գործիսի և Արտաշատի առաջինների վարիչները — Կարմիր խաչի ընկերության շրջկոմների նախագահները (Ամիրյան, Սամսոնյան) կտրված են սկզբնական կազմակերպություններից, չեն կազմակերպում սանիտարական բոկատներ, սանիտարական պոստեր, անուղադրության են մատնել մասնաճյուղի կազմակերպության գործը։

Կարմիր խաչի ընկերության գործունեության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում բնակչության շրջանում տարվող սանիտարական-լուսավորության մասնաճյուղի աշխատանքը։

Անհրաժեշտ է նշել, որ այդ աշխատանքը համեմատաբար ավելի լավ հիմքերի վրա է դրված ուսումնական հաստատություններում։ Դպրոցական սանիտարական պոստերի ստուգման ժամանակ առանձնապես աչքի ընկան Երևանի № 6, 1 և 11 ու մի քանի այլ դպրոցներ, որոնք ունեն սանիտարական անկյուններ, բժշկական հանրամատչելի գրականությունը հարուստ գրադարաններ, կազմակերպվել են ֆոտոցուցահանդեսներ, ժամանակին լույս են ընծայում պատի թերթեր ու լայնորեն լուսաբանում Կարմիր խաչի ընկերության աշխատանքները։

Պուշկինի, Մայակովսկու, Հակոբյանի անվան դպրոցների Կարմիր խաչի կազ-

մակերպությունները նամակագրական կապ են պահպանում դեմոկրատական երկրների դպրոցների Կարմիր խաչի կազմակերպությունների հետ, կատարում փոխի փոխանակում։

Վերոհիշյալ դպրոցական սանիտարական պոստերը հաճախակի հետաքրքիր և բովանդակալից դեկորումներ ու դրույցներ են անցկացնում հիգիենայի, երեխաների տրավմատիզմի պրոֆիլակտիկայի և այլ հարցերի շուրջը։

Սակայն այդպես չէ գրությունն ամենուրեք։ Արտաշատի, Գորիսի, Մարտունու և մի քանի այլ շրջանների դպրոցներում Կարմիր խաչի կազմակերպությունները զբաղվում են միայն անդամավճարների գանձումով, իսկ իրենց հիմնական պարտականությունների կատարումն աչքաթող են արել։

Կարմիր խաչի ընկերության կարևոր խնդիրներից է նաև դոնորների պատրաստումը։ Կազմակերպական և ագիտացիոն մի շարք միջոցառումների շնորհիվ այս տարի դոնորների թիվն աճել է 572-ով, ընտրվել են մեծ թվով պահեստի դոնորներ։

Վերևում հիշատակված թերությունները վերացնելու համար հարկավոր է ամրապնդել սանիտարական ձևավորումները, հատուկ ուղադրություն նվիրել աշխատավորության շրջանում տարվող սանիտարական լուսավորության պրոպագանդային, նպատակին օգտագործել բժշկական աշխատողների ակտիվը։ Բուժաշխատողների պարտքն է լինվել օգտագործել եղած հնարավորությունները, աշխուժացնել Կարմիր խաչի քաղաքական կազմակերպությունների գործունեությունը և այն ծառայեցնել առողջապահության հրատապ խնդիրների իրագործմանը։

Գ. ՓԱՇԵՆՅԱՆ

Հայկական ՍՍՌ Կարմիր խաչի ընկերության Կենտկոմի նախագահի տեղակալ

ՆՐԱՆՑ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Սեղանի վրա վիճակագրության է սպասում ուսանողուհի Մարիա Օսիպովան։ Նրա աչ նախաբազուկը շարժված է, ձեռքը այլանդակված և աշխատանքի համար ոչ պիտանի։ Երկար տարիներ ղիմել է շատերին, ասել են՝ «անբուժելի է»։ Եվ անհաճախ, փորձելով իր վերջին հույսը, ներկայացել է Երևանի Օրբայեղյայի և տրավմատոլոգիայի ինստիտուտ։

Բժշկական գիտությունների դոկտոր Ի. Խաճակյանը խոստացավ վերականգնել նրա ձեռքը։

Չնայած իր պատկառելի տարիքին, բժիշկ Խաճակյանը՝ երիտասարդական ավյուրով լի, ձեռքերի մեջ արագ-արագ շարժում է վիճակագրական գործիքները։



Մ. Օսիպովան բուժվելից առաջ։

Վիճակագրական աշխատանքը նա սկսում է ներկայից։ Ներկայից անցածից հետո, բժիշկը հույս կարգով կպահանջի հետազոտում է շրջնում ու միջանցքներ, ապա ծուղ կպահանջի բաժանում իրարից ու դնում ճշմարիտ դիրքում։

Վիճակագրության ավարտված է։ Հիվանդի ձեռքը դրվում է գիպսի մեջ։

Չնայած հաջող վիճակագրության, հիվանդի շուրջը խմբված բժիշկներն ու բուժօգնականները ինչ-որ բանից անհանգստացած են։

— Տեսե՛ք ի՞նչ ընթացք կունենա վիճակագրությունը, — շեշտում է բուժօգնականը մեկն իր կողմից ակնաչին։ Իսկ նա, նայելով հիվանդին, վստահ լսելով ձայնով ասում է։

— Համոզված եմ, ամեն ինչ լավ կընթանա։ Մեկ ամիս անց ձեռքը գիպսից հանվում է և, վաճ-

ճանքի, բժշկական ֆիզիոլոգիայի ու պատափիքի օգնությամբ, կատարվում կոմպլեքսային բուժում։ Անցնում է ես մի քանի օր...

Մտառու էր հատկապես այն տեսաբանը, երբ, հիվանդանոցից դուրս գրվելուց հետո ժամանակ անց, Մարիա Օսիպովան կրկին ներկայացավ Օրբայեղյայի և տրավմատոլոգիայի ինստիտուտ։




Մ. Օսիպովան բուժվելուց հետո։

Ավելուր խոսքեր հաշվառել չեն, նա բժշկից խնդրում է բոլոր մի կտոր և, հաջող զբաղվել հույսով։


— Ես ամբողջ սրտով շնորհակալ եմ մեր բժիշկներից, որոնք ընդունակ են վերականգնել ինձ նման հաշմանդամների աշխատունակությունը։

Օրբայեղյայի և տրավմատոլոգիայի ինստիտուտում Ի. Խաճակյանը եզակի դեմ է։ Այստեղ բազմաթիվ հաջող վիճակագրություններ են կատարվել այնպիսի առանձին հանգամանքներում, ինչպիսիք են պոսթ. Բ. Պետրոսյանը, դոցենտ Ա. Թոխյանը, բժշկական գիտությունների թեկնածու Ս. Հովհաննիսյանը, բժիշկ Լ. Գրիգորյանը և մյուսները։ Տասնյակ հիվանդներ իրենց կյանքով պարտական են մեր այդ վիճակագրությանը։

Գ. ՄՈՎՍԻՍՅԱՆ



Տեսողական նյարդերի ուղին ըստ Ամիրդովլաթ Ամասիացու ,
Օգուտ բժշկության գրքի, 15-րդ դար



Տեսողական նյարդերի
ուղին ըստ Ֆրանկ
Նեթթերի ,Մարդու
Անատոմիայի Ատլաս,
21-րդ դար